

2456

~~21799~~

1621


~~21799~~

1898

Հիշի Երգիչու

Նոր ուղեւորութիւն ի Կովկաս

1898





Comte Eugène de Richelieu

ԵՐԳԵՆ ԻՈՍ ԶԻԶԻ ԿՈՄՍ ԼՈՒՆԳՍՐԱՑԻ

2456



Ն Ո Ր

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ԿՈՎԿԱՍ

Հնախօսական եւ Ազգաբանական

Հ Ա Յ Գ

ՈՒՆԳԱՐԱՑԻ ազնիւ կոնսէ **Եւգինէոս Զիչի** ձանապարհորդելով դիւյ Ի Կովկաս և ի Կեդրոնական Ասիա, — իր արդիւնք իւր ձանապարհորդութեան, — ի յոյս ընծայած է անցեալ տարւոյն մէջ, հոռնկարերէն և գաղղիներէն յեզուներով երկու ստորաբ հաստրներ¹ (էջ 1-620), մարտը և ընտիր տպագրութեանը, զարդարուած 150 փորագիր զատ զատ տախտակներով (planche) և բազմաթիւ պատկերներով իջից մէջ. ուրոնք կը ներկայացնեն տնական, երկրագործական և այլ պիւպիս հնախօսական աւարկաներ: Այս հրատարակութեան առաջին հատորոյն մէջ բաշական երկարօրէն և հետօրէն գրած է հեղինակին, նախ հոռնկարական ազգի գաղղիականութեան պատմութիւնը, և ի մասնաւորի նկարագրած է իւր **Զիչի**² տոնմի յեղարակութեան հետքիւնը: Յետոյ

նաեւ տեղեկութիւններ կու տայ ի Կովկաս և ի Կեդրոնական Ասիա բնակող ժողովրդոց ազգային պատմութեան, անոնց բարոյց, սովորութիւց և գրականութեան վերաբերեալ մանրամասնութեանց վերայ: Բայց երկուսրոնքն աւելի կարեւոր և հետաքրքրական մասը կը կազմեն Կոնս **Զիչի** յրած հաշարածոյքն ազգագրական (ethnographique) և հնախօսական աւարկայից, որոնք արդիւնք են 1880 թուականէն ի վեր գաղղիացի, գերմանացի և ուրու գիտնականաց ձեռք տղած պեղմանց ի Կովկաս և Հայաստանի այլ և այլ կողմեր, և մասնաւոր յԱրշաձոր (Սիւնեաց Բաղք գաւառին մէջ):

Այս ձոխ հաշարածոյն **Զիչի** կոնսէ կոռիւրած է Հոռնկարիոյ Ազգային Թանկարանին, զոր խնամքով դասաւորած և նկարագրած են երկրորին հոռնկարացի հնագետքն, Յովհաննէս Եանքոյ՝ ազգագրական մասը, և Պոստա Բեկա՝ հնախօսական մասը:

Կոնս **Զիչի** ներկայ գրութեան ոձոյն և հետոնքեան փոքրիկ ձաշակ մի տարու համար, աւելորդ չենք համարիր Հայաստանի և Հայոց վրայ տուած տեղեկութիւնքը բարգւ մանկելով գետեղել Բաղձաձիւղիս սիւնակաց մէջ. րիպիտ մեզ Հայոցս համար՝ չկայ շատ կոռոնքիւն մի իւր տուած տեղեկութեանց մէջ, սակայն և այնպիս յոռուանք, րի սխորժով

1. Անցեալ տարի ազնիւ Հեղինակն այցելելով ի վանս մեր, իւր ձեռամբ նուիրեց մեր գրատան օրինակ մի այս հոռնկարը երկհատորներու:
2. Zygi կամ Zygii աւազակաբարոյ ազգ մի յափուեն Պոնտոսի և ի Կովկաս. կոռնք են ի Յունաց Zygriani, իւր Զիւզրեանք կամ Ծիւրեանք, Ծըլըեանք, գուցէ և Ծիւրք:

կարգացուցի իրրոշ օտարազգոյ մի գրոշքիւն : Եւսակապիս, զակց չեկք ընկեր հաւնաօտիւ յիշատակել, վերջերս Ռոշաանայատաւի մի քակի տեղոշակքը կատարուած պեղմոշկը, և յերեշակ եկած քակի մը կտոր աշարկայքը, ըստ Չիլիի տոշած տեղեկոշքեակն :

Հ. Ե. Ա.

ՍՈՎԿԱՍՏՈՒ Հայոց թիւն է գրեթէ 780,000 : Սոցա մեծ մասն (52%) կը բնակի Երեւանու նահանգին մէջ, իսկ մնացեալքն ցրուած են Կարսի, Ծուշիի, Գանձակի (Եղիսաբեթուպոլիս), Ծամախու և Բագուի վիճակաց մէջ : Ասոնցմէ զատ փոքրիկ խմբեր եւ կը գտնուին Տփլիսու նահանգին, Անդրակովկասեան քաղաքաց, հիւսիսային կովկասու և մանաւանդ Մոզդուի, Խըզլիար և Նոր Արմաւիր քաղաքաց մէջ. սակայն աւսոնց բովանդակութիւնն կազմուած է զանազան յեղանակաց մէջ : Օսմանեան Հայաստանի մէջ կան (1,000,000 — 1,500,000) Հայք, ի Պարսկաստան (100,000), յԱւսարիա—Հունգարիա (16,000), յԱփրիկէ (500) և ի Բրիտանական Հնդկաստան (5000) :

Ասորիք և Հրեայք Ուրարտու (= Արարատ) կը կոչեն զՀայո, Յոյնք (Հերոդոտոս) Ալարոզի կ'անուանեն զանոնք, Պարսիկք ալ Արմինա . իսկ ինքեանք կը կոչեն զիրենք Հայք կամ Հայկազոնք, ըստ իրենց խորհրդաւոր Հայկ նախահօր, զոր համարին Մննդոց գրոց մէջ յիշեալ թորգոմի որդի . որ խոյս տալով Բէլ թաղաւորի բռնութենէն՝ իւր ժողովուրդը տարաւ զէպ ի հիւսիս և բնակեցաւ Հայաստանի մէջ : Հայկայ յաջորդաց մէջ եղած է մի ոմն Արմենակ անուամբ, և իւր անունը տուած այս ժողովրդեան, և ուրիշ մ'այլ, այսինքն է Արա Գեղեցիկն, զոր կը ջանար իրեն որսալ Ծամիբամ թագուհին : Ի սկզբան, Հայաստան Ասորեստանեայ իշխանութեան ներքեւ էր, յետոյ ընկճուեցաւ ի ձեռն Մեծին Աղեքսանդրի. սակայն Մհրդրգասայ օրով ստոյգ մեծ տէրութիւն մ'էր ընդ իշխանութեամբ Տիգրանայ, յետոյ Հռովմայեցիք և Պարթեւք մարտնչելով անկախ Հայաստանի հետ իրենց իշխանութեան մէջ

ամփոփեցին . յամին 114, Տրայիանոս հռովմէական զաւառ մի կազմեց զՀայաստան . այլ յամին 117 Ազրիանոս վերսին իրեն զարձուց իւր ազատութիւնը, զոր և կը պահէր մինչեւ ցամն 232, ընդ իշխանութեամբ Արշակունեաց : Ապա ուրեմն ենթարկուեցաւ բաւական ժամանակ Սասանեան իշխանութեան ներքեւ : Գ. դարու կիսուն ընդունեցան Հայք զքրիստոնէութիւն և Հռովմէական պետութեան պաշտպանութիւնը ինչորեցին ընդգէմ Պարսից, բայց ի զուր . վասն զի յամին 387 իրենց թագաւորութիւնն բաժնուեցաւ ընդ մէջ Բիւզանդացոց և Պարսից : Պարսկային մասն այսպէս մնաց մինչեւ ցամն 636, և յետոյ անցաւ ի ձեռս Խալիփայից, որոնք պահպանեցին զայն մինչեւ ցամն 885 : Յետոյ, մինչեւ ԺԱ դար՝ ոստիկաններ ունեցաւ և իւր անկախութիւնն տեսց մինչեւ ԺԳ դար : Այս թուականէս վերջ՝ Հայաստան կ'ենթարկուի անլերջանալի արշաւանաց, զարհուրելի խառնիճաղանձ բազմութեան զօրաց Լէնկիմուրի, Քուրդերու, Պարսից և թուրքմենաց, որք հետզհետէ միմեանց կը յաջորդեն : Եւ այսուհետեւ այս երկիրս համեմատութեամբ խաղաղ կեանք կրցաւ ունենալ, այն ժամանակ միայն՝ երբ յամին 1829 և 1878 բաժնուեցաւ նա ընդ մէջ Ռուսիոյ և թուրքաց :

Հայք ի վաղուց կը բնակին ի կովկաս. նոյնպէս տարածուած են Տաղբտանի մէջ, որոյ կը վկայեն պարսիկ, յոյն և հայ ժամանակագիրք, ինչպէս նաեւ Գարբանաի հայկական ճարտարապետութեան յիշատակներն : Հայոց ամբողջական գաղթականութիւնքն ի կովկաս և ի վրաստան սկսած են յետ խաչակրաց, ի ԺԳ դարու, որ է ըսել՝ Հայաստանի թագաւորութեան անկմանէն յետոյ : Մեծն Պետրոս նպաստներ շնորհեց գաղթելոց, և գաղթականութիւնք չղաղբեցան մինչեւ ցարդ . վասն զի Հայք ուրիշ բան չէին խընդրեր բայց միայն հանգստութիւն, որ և բուրրովին ապահովուեցաւ Ռուսաց պետութենէն :

Հայք կը խօսին հնդկագերմանական լեզու մի, սաստիկ խառնուած պարսկական ձայնաւորներով . ժողովրդական լեզուն կը

տարբերի հին հայերենէն, որ այժմ եկեղեցական պաշտամանց համար զործածուող լեզու մի դարձած է, այնպէս որ արդի գրականութիւնն կը զարգանայ ժողովրդական լեզուի հիման վերայ : Հին հայկական գրականութիւնն՝ որոյ յիշատակներն քրիստոնէական թուականի մինչեւ Ե դարը կ'եննեն՝ շատ ճոխ է, մասնաւորապէս պատմական երկասիրութիւններով : Արդի հայերենի գրականական առաջին փորձերն կը սկսին ԺԳ դարէն : Հայերէն լեզուն ունի բազմաթիւ գաւառաբարբառներ, որք՝ սակայն կը բաժնուին յերկու, արեւմտեան — արեւելեան և կովկասեան բարբառներ : Հայերէն գրչութիւնն կամ տառերն զործածուած են սկսեալ յամէ 402 :

Հայկական ցեղի մարդաբանական դժադրութիւնքն են . աչքն և մազերն շատ սեւ, գլուխն բարձր, բարձրածեւ, փոքրիկ և երկայն (hypsi-brachicephale), քիթն ուղիղ, գրեթէ կորընթարդ բոլորած ծայրով, երեսն միջակ լայնութեամբ, հասակն միջակէն աւելի բարձր . գլխոյ յետակողմն և ծայրն արուեստական տաճեւութիւն մ'ունին, որ և դիտուած է 70% մարդկանց վերայ . բայց այս քիչ կ'երեւի առ կանայս : Երկու զննողք անդամաչափական զործողութիւններ կատարելով 47 անհատից վրայ՝ յառաջ բերած են հետեւեալ նշանակները . գլխոյն 85. 17 և 85. 68, 86. 58, 87. 17 և 87. 7 երեսին, 62. 35, 63. 50 և 65. 05 քմի :

Գալով Հայոց կրօնքին՝ իրենք կը գտնուին այն ժողովրդոց մէջ՝ որք առաջին եղած են զքրիստոնէութիւն ընդունելու . սկզբան կաթողիկոսայք էին՝ բայց յետոյ ուրեմն հերձուած մի յարուցանելով կը բաժնուին թէ հռովմէական կաթողիկէներէն և թէ յունածէս ուղղափառներէն, իրենց հայկական ազգային եկեղեցի մը հաստատելով, որոյ գլուխն է կաթողիկոսն, — զոր կ'ընտրէ ժողովուրդն եպիսկոպոսաց միջէն, — և որոյ աթոռն է յԵջմիածին, Արարատ լեռան մօտ :

Հայերն հանձարեղ, յարատեւող, փառասէր, աշխատասէր մարդիկ են, և միանգամայն զիրաւ հետեւողք յառաջադիմութեան զարգացմանց և գաղափարաց . չափազանց յա-

ջողակութիւն մ'ունին վաճառականութեան : Իրենց վարժ մտաւորութիւնն իրենց անխոնջ գործօնէութեան հետ միանալով՝ սեւական զիրութիւն և հաստատուն զարգացում մի կու տայ իրենց կովկասի մէջ ունեցած նշանակութեան և ազդեցութեան : Իրենց ընտանեկան կեանքն կնքուած է կնքով հաւատարմութեան, որ միանգամայն ճշգրտի կը յայտնէ անոնց ինչ ըլլալն՝ իրենց կրօնական կենաց մէջ և առ ժողովրդական սովորոյթն ունեցած մեծարանքը : Իրենք միշտ ռամկասետականք եղած են, խորշելով ցեղցեղի մէջ ո՛ր և է խարութիւն գնելէն :

Տակաւին նահապետական կեանք մի կ'անցունեն ընտանեաց մէջ, որք կ'ունենան 20—40 անձինք, և կը կառավարուին երիցագունի կամ գլխոյ մի առաջնորդութեամբ, որոյ հեղինակութիւնը միշտ կը յարգէ ընտանեաց իւրաբանչիւր անդամն : Մեծաւ մասամբ երկրագործք են . միայն քաղաքացիք կը պարտալին ձեռագործական արուեստիւ և վաճառականութեամբ : Տներն կարգադրուած են թուրքաց բնակարաններուն ոճով . որոց մէջ չկայ նորատեսիլ բան մի բաց ի թանիւրէն, որ կաւեղէն ստուար և բարձր տակաւ մ'է, սենեկի յատակին մէջ փորուած . վարի կողմը բովընտի ծակ մը կայ ուսկից կրակը կը վառեն . ծակին վրայ՝ վերի կողմէն կը զբտնուի խաչերկաթն, որուն վրայ կը դրուի կաթսան, լցուած եփուելիք կերակրով : Հայոց կերակուրն շատ համբաւաւոր է, մանաւանդ իրենց խմորեղէնքն և քաղցրուէնիքն (confitures) :

Այր մարդկանց տարազն կը նմանի լեհացոց տարազին, այն կերպով միայն որ երկուքն ալ արեւելեան ծագում մ'ունին . հագուստին է սպիտակ կտաւէ շապիկ մը, սեւ սաքաւ մը՝ գօտիով կապուած, ոտքերուն սեւ մուճակներ, շապիկի վրայէն ալ սեւ սնդուսէ (satin) բաճկոն մի, կուրճքի վրայի մասն բաց և սպիտակ թաշկինակով մի (fichu) սեղմուած . զգեստն սեւ չուխայէ արխալըխ մ'է՝ (խիլայի նման, caffetan) բարձր օձիքով, ետեւէն ծալքերով, առջեւէն ալ կոճակներով ամփոփուած . գլուխը կը գնէ փափախ մը՝ ծայրը պատառէ : Մակայն այս զիւղաց-

Handwritten notes in Armenian script, possibly indicating page numbers or specific references.



ւոյն տարազն է. քաղաքացին կամ հարուստ գիւղացին՝ աւելի նուրբ պտտառներ կը գործածէ. արխալըխն պատած է չուխայով, գօտին աւելի լայն է, և ձօխ զարդարուած ոսկով և արծաթով. իւր կապոյտ կամ սեւ տաքսան լայն է և զարդածեւ հանգոյցով մը կապուած ծնկան վրայ. կօշիկն բոլորովին եւրոպական է :

Կանանց տարազներն գոյնզգոյն են և գուհարագարգ. բայց աւելի հոգ կը տանին սօքա իրենց գլխարկին (coiffure)՝ զոր վրացիներէն առած են : Սպիտակ կտակէ շապիկ և շըւվարի վրայէն կը հագուին բաճկոն մի՝ զոր և կը կապեն ձօխ գօտով մի. կարմիր կամ կանաչ մետաքսէ արխալըխ մը՝ որ կարուած է խալարի (khalat) ձեւով, սպիտակ աստառով, և վերջապէս թրքական պատառներով չուխայ. սօքերնուն կը հագնին գունաւոր գուրպաններ, կարմիր հողաթափներ՝ առանց կրունկի. տնէն զուրս ալ կը գործածեն կարմիր կամ կանաչ մուճակ : Վրայի գլխարկն ձօխաբար զարդարուած է զրամներու կամ մարգարիտներու շարքերով և ծածկուած երկու քօղերով (fichu), վարի կողմի փողտրն կը պլլուի պարանոցին շորս կողմը. (նոր ամուսնացած հարսն բերանը կը ծածկէ այս քօղով, հրաման չունի իւր ընտանեաց հետ խօսելու մինչեւ իւր անդրանիկ սրբոյն ծնունդը), իսկ վերի կողմի քօղն կ'իջնէ ի վայր մինչեւ կրունկն :

Հայկական հնաբանութեան նկատմամբ կ'իմացընէ կոմսն Զիլի հետեւեալ տեղեկութիւնները :

Գահիրէի թանգարանին տեսուչ և գաղղիական պետութեան նուիրակն Յ. Մորգան, փորելով Ռուսահայաստանի և Տիբիսու հարաւորողը գտնուող խէյտան-տաղի (Kheitan-tagh), Սիւրբայի և Մուշիի (Mouchiyer) գերեզմանոցները, իւր ըրած գիւտերը հրատարակեց հետեւեալ վերնագրով. «Գիտական ուղեւորութիւն ի Կովկաս : Հնախօսական և պատմական ուսումնասիրութիւնք» (Պարիս 1889) : Մի և նոյն ժամանակ նաեւ Հ. Բրուզը (H. Brugsh), Վ. Բելի և Ե. Ռէօպէր գիտնականք փորելին Գետաբակի, Գալարէնի, Կեօք-տաղի (Gogdaia), Գաւ-

րա-մուրաի, Ռէգլին-Լակերի (Redkin-Lager), Հելենէնդորֆի, Տաթեւու վանքին, Օխտուչայի (Okhtouchaï), Մեղրիի, Խարապայի, Պաշ-Գառնիի, Աղեքսանդրապոլի, Արջաձորի, Խօճալիի (Khodjali), Խանքէնտի և Կիւլապուի շրջակայքը, և իրենց գիտագութիւնքը կամ տեղեկութիւնքը հրատարակեցին գերմաներէն «Ազգախօսական օրաթերթին մէջ»¹ » այլ և այլ վերնագրովք :

*

Շանտր գաղղիացին տեսած է ի Կովկաս բազմաթիւ բնական կամ արուեստական քարայրներ, որոնք յերկրաբանից կը համարուին նորաքարի (néolithique) դարուց մարդկան բնակարան կամ գերեզմաններ, ինչպէս որ այս բանս ստուգուած է ուրիշ գաւառներու մէջ. բայց Շանտր կը յաւելու, թէ մինչեւ ցարզ ոչ մի հնախօսական գիւտ եղած չէ, որ սպացուցանէ մեզ, թէ այս քարայրներս այդ նպատակի ծառայած և միանգամայն վերջելեալ յեղանակի գործեր եղած ըլլան : Սակայն հաւանական այն է, որ այս քարայրներու մեծ մասն ծառայած ըլլան ո՛չ թէ իբրեւ դոլմեն (dolmen) կոչուած կարկանդակներ, այլ իբրեւ բնակարան մետաղահանից, որոնք հին ժամանակաց հետէ շահաբեր ըրած են այս երկիրներու մէջ գտնուող աղի, պղնձի և երկաթի հարուստ հանքերը : Իսկ Պայէւն կ'ըսէ, թէ ասոնք բազմաթիւ հայկական քարայրներ ըլլան և իբր բնակարաններ ծառայած խալիբներու (Khalibe), որոց մետաղահանութեան մէջ ունեցած ճարտար յաջողութիւնը՝ յիշատակած են նաեւ Հոմերոս և Հերոդոտոս : Գիւբուա Մոնպելէյ՝ Կոլբ անունը — որ Հայաստանի երեք հանրային տեղեաց կը տրուի — կը նմանցընէ խալիբ անուն, և կ'ըսէ, թէ Ալազան գետի անունն խալիբներու գրացի Հալիգոնի ժողովրդեան անունէն յառաջ եկած է :

*

Կովկասու մէջ ոչ մի տեղ գտնուած չէ տակաւին ո՛չ զուտ անագ և ոչ ալ անա-

1. Zeitschrift für Ethnologie.



գային հանք մի, թէպէտեւ Ա. Արծրունին՝ Վիրիսովի խնդրանօք շատ հետազօտած է այս բանս թէ տեղեաց և թէ զրոյց մէջ : Արզ, անալն կը բերուէր Պարսկաստանէն և մանաւանդ՝ ըստ Վիրիսովի՝ Խորասանէն : Ստոյգ է, թէ մօտերս Վ. Բելի գտաւ Գալարէնի գերեզմանոցին մէջ զուտ անագէ խալխալայ (anneau de jambe) մի. նմանապէս սպիտակագոյն մետաղեայ զարդ մ'այլ զրուուած է Արջաձորի գերեզմանոցին մէջ, որ հաւանօրէն անագէ է. բայց այս առարկայքս կրնան ըլլալ միայն իբրեւ անհարթ անագ (étain brut) :


*


Արջաձորի գերեզմանատեղեաց մէջ զրուուած են պղնձեայ գեղարդուք, որոց բունի կամ կոթի ստորին ծայրն պատուած է պղնձով : Այս գեղարդուքս ունին կարճ թիթեղներ և երկայն կոթառներ (doville) որոնք — պատկերաց ցուցածին համեմատ — գալարմամբ շինուած են և ոչ թէ ձուլմամբ : Գարձեալ, գտնուած են յԱրջաձոր պղնձի օղակներ կամ մանեակներ կեռածեւ եղերօք, անասնոյ գլխի կերպարանօք : Ըստ Վիրիսովի, ասոնք կը գործածուէին աղեղներու լարերը պրկելու համար : Եոյն Արջաձորի գերեզմանատեղոյ մի մէջ զրուուած երեք կծկած կմախքներու գլխոց վերայ՝ գտնուած են կիսագնդածեւ սաղաւարտ-

ներ՝ կոնածեւ կոճակներով : Վ. Բելի կը տարակուսի ասոնց սաղաւարտ լինելուն վրայ, սակայն Ռէօպէր կ'ըսէ, թէ այս կարծուած սաղաւարտներն առաջին շօշափմամբ փշրեցան, որով կ'ապացուցուի, թէ ասոնք ամենանուրբ թիթեղներով շինուած ըլլան : — Ռէօպէր ուրիշ նորագիւտ սաղաւարտի մ'այլ նկարագիրը կ'ընէ, զարձեալ այս եւս կիսագնդածեւ, դէպ ի շօժակը ունենալով թիթեղ մի, երեքթեւեան զարդմանակով վեր բարձրացած, և գլխոյն վերայ յովազ մի ձեւացուցած : Այս ոճով եօթը հաս սաղաւարտներ եւս գտնուած կարծուին Սախարդան լեռան վրայ, Գոլատակ կոչուած Հայոց գիւղի մը գիմաց, ձեռամբ վահանայ Տատեան, որ Մեծարանց — Ս. Յալորայ վանքին հայ արեղաներէն մին է :

*

Գարձեալ, Արջաձորի մէջ գտնուած են այլ և այլ առարկաներ, ինչպէս կացիններ, երկժանիներ, պերճազարդ գօտիներ մարդու և անասնոյ կերպարանօք, զարդմանակներ, հայելիներ և այլն, զորս աւելորդ կը համարինք մասնաւորան նկարագրել. փափաքողք կարող են փնտռել գայնս Հեղինակիս երկասիրութեան մէջ, միայն չմոռանանք ըսելու, որ այս գտնուած բոլոր առարկայքս՝ երկաթեղէն գարու գործք են :







ՄԻ Հայաստանի անկախության հռչակագրի



MAL001812

